

կոչուած տօներուն համար, որոնք կրնան Յունուարէն Յունիս փոխադրուիլ, Զատիկին կանուխ հասնելուն պատճառով, կամ ալ փոխադարձաբար: Բայց չէ կարելի տօն մը Յունուարէն մինչեւ Դեկտեմբեր յետաձգել, ու նախորդ տօնախմբութենէն (1956 Յունուարէն) 23 ամիս հետացնել, ըստ կամս:

★

Չենք ուզեր ուրիշ ալ մանրամասնութիւններու խճողումով ձանձրացնել մեր ընթերցողները, որոնց արդէն համբերութիւնը թերեւս հաւոյնցինք տոմարական ու ծիսական թուարկումներով: Այս բոլորին մէջէն կարեւորն էր ներկայացնել այն աշխատանքը որ տարուէ տարի կը կատարուի ի սպաս այս չնչին գրքոյկին, որու պաշտօնն է կանոնաւորել մասնաւոր մանրամասնութիւններով: Յաճախ կը թերթատենք զայն, ու տարուան վերջը արդէն իսկ մաշած ու անգործածելի բան մը դարձուցած կ'ըլլանք, որուն համար այնքան սիրտ ու խնամք հաւոյնցած է

անոր կազմողը, մանրամասն քննելով եւ լուծելով ամէն տարի ներկայացող հարցեր. այո՛, այսօր, այդքան տարիներու հաւաքածոյի մը դիմաց, դործը անշուշտ շատ աւելի դիւրին է, քանի որ յաճախ կը կրկնուին նման ձեւով ու կազմով. այնուհանդերձ կան միշտ մանրամասնութիւններ՝ որոնք կը պահանջեն լուրջ պատրաստութիւն եւ մանաւանդ փորձառութիւն: Վենետիկի Օրացոյցները, իրենց պարզութեան մէջ, որով կը ներկայանան այսօր, առանց տոմարական բարդութիւններու, իրօք ցոյց կու տան այդ հմտութիւնը եւ մասնագէտի տիրապետութիւնը:

Իսկ եթէ նկատի առնենք օգտերեւութաբանական գուշակութիւններու եւ աստղաբանական կարեւոր տոճեալներու ներկայացումը, չենք կրնար առանց հիացումի փակել այդ հին էջերը, արդարօրէն դնահատելով անոնց բոլոր յայտնի կամ ծածուկ վաստակաւորները՝ որոնց թանկագին ժամանակին ծնունդ է ժամանակի այդ չքնաղ յայտարարը, որ ամէն տարի մեզի կ'աւետէ ուրախ ամանորը եւ կը դառնայ մեր ալ կեանքին տարեգիրքը:

ՔՆՆԱՍԷՐ

ՀԱՅՐ ՍԱՀԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՅՐ ՍԱՀԱԿ... այս երկու պարզունակ բառերուն մէջ կը ներկայանայ ինք ամբողջ. այս երկու պարզունակ բառերով կը ճանչնային զինք ամէնքը. այս երկու պարզունակ բառերով, աւա՛ղ... այդ ամէնքը եկան ողջունելու իր դադաղը եւ ամէնքը թրջելու իր թարմ հոգակոյտը:

Բարի, չա՛տ բարի հայրիկի մը տիպարն էր ան, մշտնափափա եւ սիրալիր՝ ամէնուն հանդէպ անխտիր: Թշնամի չէր կրնար ունենալ. կը բաւէր պահիկ մը հետը տեսակցել, իրենն ըլլալու համար յաւիտեան:

Կը սիրէր մանաւանդ մանուկները, հայ մանուկները, որոնց համար ինք համակ նուիրում էր: Սրբազան բան մը ունէր իրեն համար հայ մանուկը, որուն վրայ կը դուրսդուար. ու կը ջանար դրոշմել այդ անմեղ հոգիներուն մէջ ազնուական սէր մը, սէրը հայրենիքին, որուն կարծէք ինք մէկ հինաւուրց մարդարէն էր, աշխարհ եկած արծարծելու համար մեր նախնեաց հոգին եւ վաղեմի աւանդութիւնները:

Հեղահամբոյր, խօսակցութեան մէջ սրբամիտ եւ զուարթասէր, ընկերութեան մը քաղցրութիւնն էր եւ ոգեւորիչ շնորհ, որ կը հրճուէր՝ երբ իր շուրջ տեսնէր նուիրում բարեկամներ ու կատակասէր մտերիմներ. մերթ կ'ունկնդրէր իր ծխամորձին ամպերուն մէջէն, անոյշ քմիւժողով մը. մերթ սրամտօրէն կը պատասխանէր, կը վիճաբանէր, կը քալէր, ամէնուն ուղղութիւնը իր վրայ, եւ ինք՝ դիւթողը բոլորին:

Հայրիկ մըն էր վաղեմի մէջ. հայրիկ մը նաեւ դպրոցին մէջ. հայրիկ մը նաեւ աշակերտներու ծնողներուն հետ, բարեկամներու հետ, որոնք բոլոր զինք պաշտելու չափ կը սիրէին: Ու չէին կրնար չսիրել. քանի որ անիկա ամբողջ իրենցն էր: Տեսակ մը ազգային եւ ընդհանրական


դաստիարակ, նաեւ ծնողներուն: Գիտէր միշտ իր թելադրութիւնները, օգտաշատ յորդորները, խրատները, ի հարկին, ճիշտ տեղը կատարել, անուշով համակել. Երբեմն նաեւ կ'ու անուշութեամբ. այնքան որ՝ հաճոյք մըն էր իրմէ յանդիմանուիլն անդամ: Ուղղամտութիւն, ողջամտութիւն եւ լուսամիտ ընթացք մը կ'ուղէր նշմարել ամէնուն մէջ. եւ ի սէր ատոր, ուխտեալ տաքեալի մը պէս կը դործէր միշտ:

Անբասիր, հաւատաւոր եւ երկիւղած եկեղեցական մըն էր միանգամայն, որ իր օծեալ ճակատին կու տար բացառիկ շնորհ մըն ալ, իրեւ հոգեւոր հայրիկ մը բոլոր զինք սիրողներուն:

Անունն ալ ՍԱՀԱԿ. լրումը հայրութեան զաղափարին. կարծես նախախնամութեան էր ուսած սրբազան կնիք մը: Մեր անմահ թարգմանիչ Ս. Սահակի ողին ու շունչն էր որ կը կրէր, ու կ'ուղէր զայն ծաւալել ամէնուն մէջ, աշակերտ թէ վարդապետ:

Ազգային անցեալի յիշատակներուն դերազանցօրէն փարած, իբր բազմահմուտ պատմաբան եւ խորթափանց քաղաքագէտ, Հայոց պատմութիւնը իրեն համար դարձուցած էր հրաշալի բաղին մը, ուր երբ բարձրանար իբր վաղեմի քրմապետ մը երկնախօսիկ, Հայկի եւ Մեծն Տիգրանի հրաւիր հոգիներն էին որ կ'արթնցնէր իր ունկնդիրներուն մէջ, պաշտամունքի համող սէր մը արծարծելով անոնց հոգիներուն մէջ:

Կրօնքի եւ ազգութեան գոյգ զաղափարներուն նուիրում տաքեալն էր ան, որ զիտէր գերազանցօրէն ձուլել եւ ներդաշնակօրէն համադրել այդ երկուքը: Ազգին նուիրում ճշմարիտ եկեղեցականը, եկեղեցւոյ նուիրում ճշմարիտ ազգասէրն էր ան: Կ'սպրէր հայրենի բարքերու վերա-



Միթարի աղօթաւոր կղզեակէն
Մինչեւ Սէնի լուսաւոր փունքներն
Հայրենի սրբութեան գիւթանքով
Կերանց հայաշունչ սերունդներ ...

նորոգման երազով. բեմէն եւ ամպիոնէն
կը մաքատէր տպագրականացումի եւ օտա-
րամոլութեան ախտերուն դէմ. այս մար-
դին մէջ անաչառ էր եւ անտեղիտալի: Այդ
հեղուկ ու բարի Վարդապետը, երբ բեմ
բարձրանար, կը դառնար հրաշունչ ամ-
բոխավար մը, երկնառաք մարդարէ մը,
որ գիտէր իր խօսքին դիւթանքով հմայել
դանդուածներ. եւ երբեմն նաեւ յանդիմա-
նել ու ձաղել հրապարակաւ՝ ազգային
դէտնի վրայ անուղիղ գործեւակերպերը,
որոնք վտանգ կը սպառնային ազգային
ոգիին:

Հապա ուսուցչական ամպիոնէն. կը
մոլէր ամբողջ դասարանը. ազգային հո-
գիի տաճար մը կը դառնար դասարանը:
Կը պատմէր իր աշակերտները՝ թէ ան այն-
պիսի թարմութեամբ ու խանդավառու-
թեամբ կը խօսէր անցեալի դէպքերուն վը-
րայ ու դանոնք կ'ապրեցնէր, որ կարծէք
թէ նոյն առաւօտն իսկ լրագրին վրայ
կարդացած դէպքի մը մասին էր խօսքը:
Ու կը գլխաւոր աշակերտները թէ ինչպէս
նա կ'ապրէր իր դիւցազներուն հետ. կար-
ծէք Վասակի հետ դէմ առ դէմ նստած՝
կը պախարակէր անոր պարսկասէր քաղա-
քականութիւնը, կամ ամէն հնարք պիտի
բանեցնէր ալեւոր Տիգրանը դարձեալ իր
գահին վրայ բարձրացնելու: Ու այդ ու-
ղին, ազգային այդ խանդավառ ոգին,
Հայութեան ոգին կը վերածնէր աշակերտ-
ներու, հայ մանուկներու սրտերուն մէջ:
Ու դարձեալ իր անոյշ ժպիտով կը մեկնէր
դասարանէն, գոհ եւ յաղթական:

Ահա թէ ինչու՛, աշակերտներ, բարե-
կամներ եւ հոգեկիցներ, տակաւին կ'ապ-
րին Հայր Սահակի յիշատակով, անոր
անմահ յիշատակով. որովհետեւ անոր կը
պարտին շատ բան. անոր միջոցով իրենց
սրտին մէջ ալ բռնկած է կայծը ազգասի-
րութեան, ճշմարիտ ու անկեղծ հայրենա-
սիրութեան:

Հայր Սահակ Վրդ.ի հմայքին մէկ ու-
րիշ ծաւրն էր անոր գերազանց պարզու-

թիւնն ու խոնարհամտութիւնը: Ճշմարիտ
գիտնական մը, համալսարանական ուսում-
նեւում եւ կէս դարու անհատական ընթեր-
ցումներով հմտացած այս գիտնական
Վարդապետը, իսկապէս խոնարհ մարդ
մըն էր, չէր գիտեր ինչ է փառասիրու-
թիւն: Եօթանասնամեայ տարիքին ալ սի-
րով յանձն կ'առնէր դասախօսել նոյնիսկ
ամենափոքրիկ մանուկներուն. եթէ Վար-
դապետ մը դէպքով բացակայէր կամ հի-
ւանդ ըլլար, սիրով անոր տեղը կը լրացը-
նէր. հոգ չէ թէ ամենափոքրիկներուն
դասն ըլլար: Միւս կողմէ, երբ առիթները
ներկայանային հանդիսապէս զնահատելու
իր հմտութիւնը եւ բազմամեայ վաստակ-
ները, ինչպէս իր քահանայութեան յիս-
նամեայ յորեխանին առիթով, ինք չէր
վարաներ հասարակաց մէջտեղ յայտարա-
րելու՝ թէ գաճաճ մըն է ինք այն տիտան-
ներուն բաղդատմամբ, ինչպէս և անմահ
Չամչեան կամ Ալիշան: Ճշմարիտ մեծերը
միայն կ'ունենան այս գիտակցութիւնը:
Իր խոնարհամտութեան մէկ նշմարն է նա-
եւ հետամուտ չըլլալը իր գրքերու տպա-
գրութեան:

Այս մասին ներուրի մեղի քիչ մը աւելի
մանրամասնել:

Լուսահոգիին մահէն վերջ, երբ մեծա-
ւորներու կարգադրութեամբ բացինք հան-
դուցեալին փակ սենեակը, կարգաւորելու
համար իր առարկաները, ո՛հ, ինչ զար-
մանք. համեստ զգեստեղէններու ծրարէն
զատ, գրքեր, անհամար գրքեր, ու ան-
թիւ, հարիւրաւոր տետրակներ: Այդ բո-
լորը, նուիրուած ազգային պատմութեան:
Եւրոպական ու ազգային հեղինակներու
հրատարակութիւններ, լրագրներէ փըր-
ցուած անթիւ պատառիկներ, քարտէս-
ներ, հինէն մինչեւ ամէնէն այժմեական
ուսումնասիրութիւններ, բոլորը Հայոց
Պատմութեան մասին. ամբողջ դիւան մը,
կարելի է ըսել, Հայոց Պատմութեան: Ահա
Հայր Սահակին հարստութիւնը. միակ հա-
րստութիւնը: Ու գրասեղանին վրայ,
գրիչը պատրաստ, գրքեր ալ ու ձախ բաց-

ուած, տետրակը... կը սպասէր իր տիրոջ օրհնեալ ձեռքին:

Թերեւս բարեկամներ ու զինքը մօտէն ճանչցողներ չկարենան երեւակայել թէ որքան տետրակներ նա աւանդ թողուցած է իր գրասենեակի դարակներուն մէջ. մանաւանդ երբ նկատեն այն մշտաշարժուն բարեկամը՝ որ յաճախ այցելութիւններով կը պատուէր զինքն, ազգասիրական առաքելութեան նպատակով: 520 տետրակ, մեծ մասով ինքնագիր: Իսկ բովանդակութիւնը՝ ամբողջապէս պատմական նիւթեր: Ամէն ինչ կանոնաւոր ու կոկիկ. իւրաքանչիւր տետրակի վրայ նշանակուած նիւթը, այդ նիւթին պատկանող տետրին թիւը. հետեւաբար շատ դիւրին եղաւ դասաւորել ամէն ինչ: Հայոց Պատմութիւն՝ Հին շրջան (43 տետր), Նոր շրջան (145 տետր), Ժամանակակից շրջան (92 տետր), Օսմանեան կայսրութեան պատմութիւն, Ռուս եւ Թուրք պատերազմներու պատմութիւն, Հայ Յեղափոխութեան պատմութիւն, Միւսիթարեան Միաբանութեան պատմութիւն, Մուրատեան Վարժարանի պատմութիւն, Միւսիթար Արբաժօր կենսագրութիւն... ու տակաւին կը յիշեմ որ երբ Փարիզէն վերջնականապէս վեներտիկ վերադարձաւ՝ պալատականներով դիմանին յանձնեց ուրիշ քանի մը հարիւր տետրակ, նման պատմական նիւթերով եւ ատաղձներով լեցուն: Ուրեմն վարդապետը իր բազմաթիւ դամբումով եւ այցելութիւններով մէկտեղ՝ ամէն օր, որոշ ժամեր, ամենայն ճշտապահութեամբ անցուցած է իր կանգուն գրասենի մը հարիւր տետրակ, նման պատմական նիւթերով եւ ատաղձներով լեցուն: Ուրեմն վարդապետը իր բազմաթիւ դամբումով եւ այցելութիւններով մէկտեղ՝ ամէն օր, որոշ ժամեր, ամենայն ճշտապահութեամբ անցուցած է իր կանգուն գրասենի մը հարիւր տետրակ, նման պատմական նիւթերով եւ ատաղձներով լեցուն: Ուրեմն վարդապետը իր բազմաթիւ դամբումով եւ այցելութիւններով մէկտեղ՝ ամէն օր, որոշ ժամեր, ամենայն ճշտապահութեամբ անցուցած է իր կանգուն գրասենի մը հարիւր տետրակ, նման պատմական նիւթերով եւ ատաղձներով լեցուն:

* * *

Կենսագրական տեղեկութիւններ հան-

դուցեալ Հ. Սահակ Վրդ. Տէր Մովսէսեանի մասին տուած ենք անոր քահանայութեան յիսնամեայ յորեկանին առիթով (Բազմալեզու 1952, էջ 203. 1953 էջ 105): Այնուհանդերձ քաղցր է մեզի փերամփոփել անոր գործունէութեան զլիսաւոր տարրերը:

Տարօնն է եղած իր ծննդավայրը (1879). անկէ ժառանգած է հայրենասիրական այն վառ աւելը, որ ժառանգութիւնն էր Մամիկոնեաններու: Ս. Ղաղարու Ալիշանեան միջնորդարին մէջ կ'աճի նա: Հաղիւ երեսնամեայ, արդէն իսկ ժողովրդական դէմք մըն է Պոլսոյ մէջ, Սահմանադրութեան օրերուն. յաջորդաբար կ'ընտրուի Պոլսոյ Հայ Կաթողիկէ Համայնքի Երեսփոխանական Ժողովի անդամ. այդ շրջանին իր ժողովրդականութիւնը հետզհետէ կ'աճի. իր լուսամիտ ճառերով եւ ուղղադատ խորհուրդներով, մարդուած ու դարբնուած պատմութեան հզօր կռանին տակ:

Առաջին աշխարհամարտը կու գայ խանդարել իր համալսարանական ուսումները: Այնուհետեւ իբր ուսուցիչ եւ Ուսումնապետ կը գտնենք զինք Մուրատ-Ռափայէլեանի մէջ. ուր կը ստեղծէ խանդավառ միջնորդար մը՝ ինքնագիր պատմական ողբերգութիւններով, ինչպէս են Աւարայրի Դիւցազները, Բարեկ Սիւնի, Վահան Գողթնեցի, Արշակ Բ. (վերջին երեքը՝ անտիպ):

1929-ին ասդին ամբողջ քսան եւ հինգ տարիներ, մինչեւ 1952, ամենամեծ ձեռքահասութեամբ եւ լայն ժողովրդականութեամբ վարած է Սեւրի Մուրատեան Վարժարանի Տեսչութիւնը:

Ու հիմա ան կը ննջէ խաղաղիկ, հոն ուր Հ. Ալիշան արձանագրած է. ՎԱՍՍԱ-ԿԵՅԱՆ, ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ:

Հանգչէ՛, վաստակաւոր վարդապետ. մեր արցունքները թող աւելի կակուղ դարձնեն այն հողը: Դուն երբեմն ամէնուս ուրախութիւնը, ժպիտն ու խանդավառութիւնն էիր. քեզի հետ եղած մի-

ջոց՝ չունէինք լաց եւ արցունք: Բայց վատահ ենք թէ բարերարն Աստուած ալ այդ քաղցր ժպիտով ընդունեցաւ քեզ իր լուսեղէն երկնքին մէջ, վարձատրելու համար քու բազմարդիւն աշխատանքդ եւ ճիւղերդ: Վատահ ենք թէ երկնքն ալ պիտի հսկես, անմահն Սահակներու եւ Վարդաններու հետ, որ մեր Եկեղեցին ու Ազգը մնայ անսասան, ամուր կառած իր սուրբերուն, իր նահատակներուն եւ հերոս գիւցազներուն, իր պատմութեան մանաւանդ եւ իր ընդունի մեծաքանն:

Հսկէ՛ հիմա վերէն, որ Միւսիթարի կանթեղին բոցը կայծկլտայ յաւէտ, եւ մեր ազգի ցիրուցան դաւաճները բոլոր միանան օր մը լուսատիւու Արարատի ալեփառ հովանիին տակ, բարօրութեան ու ճշմարիտ խաղաղութեան գուարթ ծխածանին ներքեւ, ինչպէս կ'երազէիր դու յաճախ, իբրեւ մարգարէ մը. Հայութեան:

Հ. Ն. Տ. Ն.

ԵՐԷԿՈՒԱՆ

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Մահուան այսչափ այլանդակ ըլլալը չէի գիտեր, եւ այսօր տեսայ: Երանի՛ թէ տեսած չըլլայի: Եթէ վրան քիչ մ'ալ մը տածէի եւ տանջուող ուղեղէս չհեռացնէի, հոգիիս մեծ վտանգ պիտի սպառնար:

Առտու մըն էր: Մինչեւ հիմա հեզանքով կ'արտասանէի մահ բառը, եւ ամէն անգամ որ բերնէս ելլէր՝ անմահ հերոս մը կը կարծէի զիս. բայց սարսափելի տեղեղ իրականութիւն մը ինձի այնքան սառնօրէն ծիծաղեցաւ որ... Այն առտու, հայելիին դիմաց, երբ ջուրի ծորակը կը բանայի լուացուելու համար, ընկերներուս բերնէն շատ խորհրդաւոր եւ անհասկանալի բառեր լսեցի... Հ. Սահակը մեռաւ... փափուքն անցաւ բերնէ բերան: Զարմացայ, չուրեցի հաւատալ. բայց այսպիսի

բան մը կատակի նիւթ չէր կրնար ըլլալ: Մահուան հետ կարելի չէ կատակել: Ահա՛ որ իրականութիւն մը կար այդ ցած խօսքերուն մէջ. բոլոր ընկերներուս դէմքերը մտածկոտ պատկեր մը առած էին:

Երբ ննջարանի մէջ պատրաստ չարքի կեցանք, Տեսուչ հայրն եկաւ, մեծ տըխրութիւն մը դէմքին վրայ դրոշմուած: Գրեթէ լալաղին պատմեց՝ թէ Հ. Սահակ Վարդապետ, երէկ, իր սովորական պըտոյտին ժամանակ սահեր ու ջրանցքն ինկեր է, եւ զինք մահամերձ՝ ջուրէն հագիւ հաներ են, իսկոյն հոգին աւանդելու համար:

Խեղճ վարդապետ, մահը Վեներտիկի ջուրերուն մէջ պիտի գտնէիր, ուր կոնտոյններն այնքան հաճոյք եւ կեանք կը փոխադրեն: Բայց ո՛չ, խեղճ ըսելու ոչ մէկ իրաւունք:

Երբ հիւանդանոց դացինք՝ տփուռնած դէմքը տեսայ: «Հայր մեր»ը ըսինք եւ ոչինչ, ոչինչ կարելի էր մտածել: Կարծես կուրծքս կը պատռեն դանակով: Քովը աղօթող կին մը կար, օտարական էր. մեռած քահանայի մը քով հաճելի է աղօթել: Բայց նա սառած էր, սառած էր այդ տաք սրտով վարդապետը:

Նա շատ երջանիկ էր հոգեւորականի իր խոր կեանքին մէջ: Ի՞նչ հաւատացեալ, ինքնիրմէ ելած՝ գլուխը շարժելով կ'աղօթէր. պատարագ կը մատուցանէր Աստուծոյ... — Սա է Կեանք, Յոյս... Յաւաքիւն, յատակ հնչեցնելով իւրաքանչիւր բառը հոգիին խորէն:

Հիմա կ'երեւակայեմ իր հոգին՝ երջանկութեան զիրկին մէջ. հեռացած է աշխարհիս սառած իրականութենէն. բայց մէկ բան. պիտի ծանձրանա՞յ արդեօք այդ անդենական անվերջ կեանքին մէջ. ո՛չ, բիւր մեղայ այսպիսի խօսք մը մտքէս անցընելուս համար: Հո՞ն է որ ամէնէն երջանիկ կարծուած կեանքն ալ յաճախ զղուանք եւ ծանձրոյթ կը պատճառէ. հոս է որ մենք զերի ենք անձանթ ոյժի մը, միայն հոս, այս երկրիս վրայ: